591 Դժվար պահին Դու հույսն ես իմ,

1. Դժվար պահին Դու հույսն ես իմ,
Գիտեմ՝ կանգնած ես Դու իմ կողքին,
Հավատարիմ ես, իմ Տեր, հավիտյան:
Երբ փոթորիկ է շուրջը իմ,
Ապավենն ես Դու իմ սրտի,
Իմ հովիվն ես, որին վստահում եմ ես:

Ե՛վ ցերեկ, և՛ գիշեր
Դու իմ կողքին ես
Միշտ, գիտեմ:
Եվ Դու ինձ հետ ես ամենուր,
Հիսո՛ւս, երբեք Դու չես փոխվում,
Դու նույնն ես, Տեր, և՛ երեկ, և՛ այսօր,
Ե՛վ հավիտյան:
Խոստումներովդ եմ ես ապրում,
Իմ ապագան է Քո ձեռքում,
Իմ ամուր Ժայռ, ո՛վ մեծ Աստված,
Պատվում եմ Քեզ:

2. Վստահ գիտեմ, երբ աղոթեմ,
Պատասխանը մի օր կառնեմ,
Քո լույսի մեջ կապրեմ հավիտյան:
Երբ խոր վերքեր են իմ հոգում,
Քո մեծ սերն է ինձ ամոքում,
Թող այսօր մեկ վայրկյան Քո մեծ սերն զգամ: